10.57192/18291864-2024.1-66

Վահրամ Ռ. Բալայան
Պատմ. գիտ. դոկտոր

Մելանյա Գ. Բալայան
Պատմ. գիտ. թեկնածու

ՂԱԶԱՆՉԵՑՈՑ ՍՈՒՐԲ ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑԻՆ ՈՐՊԵՍ ԱՐՑԱԽԻ ԹԵՄԻ ՆՍՏԱՎԱՅՐ*

Բանալի բառեր – Ս. Ամենափրկիչ տաճար, Շուշի, Ղազանչեցոց եկեղեցի, Արցախի Հայոց հոգևոր թեմ, առաջնորդարան, Ղարաբաղ, առաքելական, Ավետարան, եպիսկոպոս:

Մուտք

2020 թ. սեպտեմբերին 27-ին սկսված ու 44 օր տևած ադրբեջանա-թուրքական ռազմական ագրեսիան և 2023 թ. սեպտեմբերի 19-ին սանձազերծված պատերազմական գործողություններն ու արցախահայության բռնի տեղահանությունը կործանարար հետևանքներ ունեցան հայ ժողովրդի համար: Չբավարարվելով այդ ամենով, Ադրբեջանը մշակութային արժեքները ոչնչացնելու լայնածավալ գործողություններ է ձեռնարկել՝ Արցախից հայկական հետքը վերացնելու համար: Թշնամու թիրախում առաջին հերթին հայտնվել են հայկական եկեղեցիները, վանքերը, խաչքարերը, մասնավորապես՝ Շուշիի Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ Մայր տաճարը, որը 19-րդ դարի սկզբներից մինչև 2020 թ. ողբերգական դեպքերը մշտապես եղել է Արցախում ծավալված հոգևոր-մշակութային ու քաղաքական գործընթացների կիզակետում:

1836 թ. մարտի 11-ի՝ «Պոլոժենիե» անվամբ հայտնի «Ցաղագս կառավարութեան գործոց Լուսավորչական Հայոց եկեղեցւոյ ի Ռուսաստան» հա-

* Հոդվածն ընդունվել է տպագրության 23.02.2024:

տուկ կանոնադրությամբ՝ կայսրության տիրապետության տակ գտնվող հայոց եկեղեցին բաժանվում էր 6 թեմերի՝ Նոր Նախիջևանի, Աստրախանի, Վրաստանի, Շիրվանի, Երևանի և Ղարաբաղի: Հիշյալ կանոնադրությամբ՝ Ղարաբաղի թեմական կենտրոն է ճանաչվել Շուշին, իսկ թեմական առաջնորդի նստավայր՝ Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցին:

1. Ղազանչեցոց եկեղեցին որպես թեմական նստավայր

Նկատենք, որ միջնադարից ի վեր Շոշ, Հունոտ, Մխիթարաշեն, Քարին տակ, Ղայբալիշեն և հարակից մյուս գյուղերի բնակչության համար Շուշին, որպես ամրոց, օտար ասպատակիչներից պաշտպանվելու ամենահարմարավետ և հուսալի վայրն էր: Հատկապես, ուշ միջնադարից սկսած, բերդավանն այնքան ապահով էր, որ արդեն ոչ միայն Արցախից, այլ նաև հարևան մյուս հայկական նահանգներից այնտեղ հաստատվեցին հարյուրավոր ընտանիքներ:

1750 թ. Նախիջևանի Ղազանչի (Շահկերտ) գյուղի հայերն ապստամբում են Հեյդար խանի դեմ: Ապստամբությունը գլխավորում էր Հովհաննես Խանդամիրյանը: Խանը նենգաբար սպանում է ապստամբության ղեկավարին: Գյուղի հայությունը ստիպված տեղափոխվում է Կապան և տեղի հայության հետ շարունակում պայքարել Հեյդար խանի դեմ: Ղազանչիի բնակիչները, ավելի ապահով կյանք ունենալու նպատակով, տեղափոխվում և հաստատվում են անառիկ Շուշիում[1]: Նույն ժամանակահատվածում այնտեղ հաստատվեց նաև Ագուլիսի և Մեղրիի հայության մի հոծ զանգված: Վերոհիշյալ գավառներից Շուշի տեղափոխված հայերը բնակություն են հաստատել հայրենակցական սկզբունքով: Բերդավանի նորաստեղծ թաղերը նրանք կոչել են իրենց նախկին բնակավայրերի (ղազանչեցոց, ագուլեցոց, մեղրեցոց) անուններով, իսկ բնիկ արցախահայերի թաղամասը կոչվեց ղարաբաղցոց կամ ջրաբերդցոց: Պատմական այդ իրադարձությունների մասին Հակոբ Զաքարյան Շուշեցին գրել է. «Եւ մինչեւ ցայսօր ժողովուրդն Շուշոյ՝ որի յազգէս մերմէ են՝ բաժանին ի չորիս թաղս կամ վիճակս՝ ագուլեցիք, ղազանչեցիք, մեղրեցիք եւ բուն ղարապաղցիք»[2]:

Ղարաբաղի խանության գոյության շրջանում Շուշիի հայությունը, համախմբվելով իրենց թաղերում գործող եկեղեցիների շուրջ, պայքարում

1 Տե՛ս **Չամչեանց Մ.**, Հայոց պատմութիւն, հատ. Գ, Եր., Երևանի պետական համալսարանի հրատ., 1984, էջ 848:

2 Մեջբերումը ըստ՝ **Մաղալեան Ա.**, Յակոբ Զաքարեանի «Պատմութիւն գաւառին Արցախու» աշխատությունը, «Հանդէս ամսօրեայ», 2006, N 1–12, էջ 382:

էր ոչ միայն իր ինքնության պահպանման համար, այլ նաև, Գանձասարի կաթողիկոսների և Արցախի մելիքների առաջնորդությամբ, փորձում էր ազատագրել հայրենիքը և վերականգնել պետականությունը: Այս իմաստով ողջ արցախահայության կյանքում առանձնակի դերակատարություն ունեցավ Շուշիի Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցին:

18-րդ դարի վերջերին Ղազանչեցոց թաղամասում, քարե հիմքերի վրա կառուցվել էր փայտաշեն եկեղեցի: Այն հիմնականում սպասարկում էր վերոհիշյալ թաղամասի հայությանը: 1821 թ. Շուշի այցելած Մ. Թաղիադյանը վկայում է, որ հոգևոր տան տեղը արդեն գործում էր քարաշեն եկեղեցի[3]:

2. Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ առաջնորդանիստ եկեղեցու կառուցումը

Երբ Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցին արդեն քայքայված վիճակում էր, 1847 թ. ծխականները դիմեցին հոգևոր իշխանություններին՝ վերանորոգելու թույլտվություն ստանալու համար: Սակայն, նկատի ունենալով եկեղեցու ծայրահեղ վատթար վիճակը, նպատակահարմար գտնվեց հնի տեղում կառուցել նորը: 1844-1858 թվականներին կառուցվել և ավարտին է հասցվել եռահարկ զանգակատունը, որն առայսօր կանգուն է: Զանգակատան շինարարական արձանագրությունը գտնվում է արևելյան ճակատամասում և հետևյալն է հաղորդում. «Յիշատակե այս զանգակատունս ղազանչեցի հանգուցեալ Գաբըրէլի Հովսէփեան Բատիրեանց և ղազանչեցի հանգուցեալ Միտի Մկրտիչ Մարգարեան Խանդամիրանց ամուսնոց ի վրոյ Բալասանին և որդիոցն Յարուփին և Ստեփանին և զաղանչեցիոց առհասարակ բոլոր ժողովրդեանն զօր ած ընկալցի ի փառս իւր փրկի հոգիոյ բոլորեցոնց կենդանեաց և ննջեցելոց յամի ազգականոցէ և փրկչական 1858 ամի»[4]: Զանգակատունը 22 մետր բարձրություն ուներ, իսկ շինության երկրորդ հարկի չորս անկյուններում փող փչող հրեշտակների քարե մեծադիր արձաններ էին տեղադրվել:

1860-ական թվականներին ծրագրվել էր եկեղեցու տեղը կառուցել Անիի մայր տաճարին նման եկեղեցի: Սակայն, ինչ-ինչ պատճառներով, այդ մտահղացումը չիրականացվեց: Ուշագրավ տեղեկություն է պահպանվել եկեղեցու նախագծի քննարկման մասին, համաձայն որի՝ ճարտարապետները եկեղեցին կառուցելու ընթացքում պետք է հաշվի առնեին նաև այն հանգամանքը, ըստ որի պատարագիչ քահանան, նախքան արարողա-

3 Տե՛ս **Թաղիադեանց Մ.**, Ճանապարհորդութիւն ի Հայս, Կալկաթա,1847, էջ 226:
4 Արձանագրությունը բերվում է հեղինակների աշխատասիրությամբ:

կարգը սկսելը, պետք է մեղքերի թողություն խնդրեր մեկ այլ քահանայից: Սակայն, քանի որ տվյալ դեպքում եկեղեցին դեռևս մեկ քահանա ուներ, հետևաբար մեկ առանձնասենյակի անհրաժեշտություն ևս կար[5]: Այս իրողությունը հաշվի առնելով՝ կառուցվել է ընդհատակյա սենյակ, ինչն էլ համարվեց եզակի երևույթ: Հատկանշական է նաև եկեղեցու տակ գտնվող այդ սենյակի ձայնային արձագանքման հատուկ կետի առկայությունը, ինչը ևս ճարտարապետական յուրօրինակ մտահղացման արդյունք էր:

1868 թ. մայիսի 21–ին, ճարտարապետ Սիմոն Տեր Հակոբյանի նախագծին համապատասխան, դրվեցին եկեղեցու հիմքերը[6]: Նույն թվականի հունիսի 20–ին, Գրիգոր եպիսկոպոս Սագինյանցի առաջնորդությամբ, տեղի ունեցավ «... մեծաւ հանդեսի հանդերձ դասուք հոգևորականաց և խուռն բազմութեամբ ժողովրդականաց կատարեցաւ միօք օծումն հիմանց Ամենափրկիչ անուն եկեղեցւոյ Հայոց Ղազանչեցւոց հասարակութեան Շուշի քաղաքի ...»[7]:

Եթե Ս. Ամենափրկիչ եկեղեցու տեղը նախկինում գոյություն ունեցած հոգևոր շինությունների կառուցումն իրականացվել է ծագումով ղազանչեցի բարերարների և, ընդհանրապես, թաղամասում ապրող բնակիչների նյութական միջոցներով ու ջանքերով, ապա նոր հոգևոր տան շինարարությունն արդեն դարձել էր համաժողովրդական հոգածության առարկա: Դա պատահական չէր, որովհետև նորակառույց Ս. Ամենափրկիչն ի սկզբանե պետք է դառնար համայն արցախահայության հոգևոր մշակութային և, ինչու չէ, հանրային կյանքը կազմակերպող օջախը: Դրա մասին է



վկայում եկեղեցու հարավային մուտքի վերնամասում զետեղված շինարարական արձանագրությունը. «Շնորհիւ եւ ողորմութեամբ ամենազօրին Աստուծոյ կառուցեալ հրաշակերտ սուրբ տաճարս արդեամբ եւ տրօք բարեպաշտօն ժողովրդեանց Սուրբ Ամենափրկիչ եկեղեցւոյն Ղազանչեցւոց Շուշի քաղաքիս, որոյ շինութիւնն սկսեալի 1868 ամի յաւուրս թագաւորութեան աստուածազօր ինքնակալ մեծ կայսեր ամենայն Ռուսաց Աղէքսանդրի Բ–ի եւ ի

5 Տե՛ս **Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան**, գիրք ԺԹ, Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմը (1649–1917), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Եր., Հայաստանի ազգային արխիվի հրատ. 2014, էջ 140–141:

6 Տե՛ս **«Նոր Դար»,** Թիֆլիս, 1889, N 170, էջ 2:

7 **ՀԱԱ,** ֆ. 56, ց. 12, գ. 511, թ. 5:

հայրապետութեան Գէորգայ Դ-ի, աւարտեցաւ ի 1887 ամի ի թագաւորութեան որդւոյ Նորին օրհնաբանեալ կայսեր Աղէքսանդր Գ-ի եւ ի կաթուղիկոսութեան Մարկարայ Ա-նոյ՝ ի 20 սեպտեմբերի 1888 ամի»[8]:

Եկեղեցին կառուցելու նպատակով հանգանակություններ կատարելու գործում մեծ էր երեցփոխ Ավետիս Յարամիշյանի դերը: Նյութական սղության պատճառով աշխատանքները ձգձգվեցին և, ի վերջո, ամբողջացվեցին 1887 թվականին՝ շուշեցի Թադևոս Թամիրյանի նյութական օժանդակությամբ: 19 տարվա ընթացքում եկեղեցու շինարարության համար ժողովուրդը ծախսել է 100000 ռուբլուց ավելի[9]:

Եկեղեցին զարդարված է եղել արձաններով: Ժամանակակիցը Ղազանչեցոց և Ագուլեցոց եկեղեցիների մասին գրել է «... զարդ ու զարդարանքը անկարելի է հաշուել»[10]: Մեկ այլ ականատես հիացմունքով նկատել է «Եկեղեցին մի հիանալի շինութիւն է ներկայացնում, որի նմանը, ինչպէս հաւատացնում են շատերը, չը կայ Կովկասի և ոչ մի հայկական տեղում: Նա շինուած է սրբատաշ սալաքարերից, հին հայոց ճարտարապետութեան կանոններով»[11]: 1889 թ. եկեղեցու շրջակայքը սալահատակվել է Հովհաննես Խունյանցի միջոցներով[12]:

Ղազանչեցոց եկեղեցին ունի 37 մետր բարձրություն (արտաքին չափերը՝ 44x38 մետր) և այդ առումով զիջում է միայն վերջերս Երևանում կառուցված Ս. Գրիգոր Լուսավորիչ մայր տաճարին: Շուշիի եկեղեցիները, դրանց մշակութային արժեք ունեցած տապանաքարերը 1920 թ. մարտյան հայտնի դեպքերի ժամանակ և դրան հաջորդած խորհրդային ժամանակներում դարձան թուրքերի այլատյացության զոհերը: Միայն հայ մարդու համառության և պայքարի շնորհիվ փրկվեցին Կանաչ ժամն ու Ղազանչեցոց Ամենափրկիչ մայր տաճարը:

3. Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցու դերը արցախահայության հանրային կյանքի կազմակերպման գործում

Եկեղեցու քահանաներն են եղել՝ 1817–1857 թվականներին՝ Հովհաննես Ղազարյան Շամախյանցը, 1828–1849 թվականներին՝ Ավագ Մինասյան Մխիթարյանցը, 1828–1857 թվականներին՝ Թադևոս Դանիելյան Տեր Սա-

8 **«Մշակ»,** Թիֆլիս, 1887, N 33, էջ 3, տե՛ս նաև «Մասիս», Կ. Պոլիս, 1887, N 3868, էջ 114:
9 Տե՛ս **նույն տեղում:**
10 **Կովկասյան լուրեր,** «Մասիս», Կ. Պոլիս, 1887, N 3868, էջ 114:
11 **Նույն տեղում**:
12 Տե՛ս **«Նոր Դար»,** Թիֆլիս, 1889, N 170, էջ 2:

հակյանցը, 1836–1857 թվականներին՝ Առաքել Թովմասյան Յուզբաշյանցը, 1848–1849 թվականներին՝ Ռաֆայել Ղազարյան Վրթանեսյանցը, 1817–1857 թվականներին՝ Հովհաննես Տեր Գաբրիելյան Տեր Գրիգորյանը, 1849–1857 թվականներին Հովհաննես Հարությունյան Տեր Մարտիրոսյանցը, 1878–1910 թվականներին՝ Հակոբ ավագ քահանա Այվազյանցը, 1892– 1910 թվականներին՝ Հարություն ավագ քահանա Տեր–Սարգսյան Վարդապետյանցը, 1888–1910 թվականներին՝ Մեսրոպ քահանա Ապրեսյանցը, 1904–1910 թվականներին՝ Եղիշե քահանա Թարխանյանցը[13]:

Ոչ միայն Շուշիից, այլ նաև Արցախի տարբեր բնակավայրերից կիրակի և տոն օրերին ժողովուրդը գնում էր եկեղեցի՝ աղոթելու, մոմ վառելու, մասնակցելու ծիսական արարողություններին: Ժողովրդին ազգային գաղափարների շուրջ համախմբելու նպատակով՝ նշանավոր մարդկանց հոգեհանգիստը, անկախ նրանց հուղարկավորության վայրից, կազմակերպվում էր Ս.Ամենափրկիչ տաճարում:

Քահանաների քարոզներում շատ դեպքերում արծարծվում էին ազգային նշանակության հարցեր: Քարոզներում տեղ գտած գաղափարները հանրության լայն շերտերին հասու դարձնելու, ինչպես նաև արցախյան բարբառի համն ու հոտը պահպանելու նպատակով, դրանք երբեմն հնչեցվում էին այդ բառամթերքով:

Հայ ժողովրդի ազգային–ազատագրական պայքարը կարևորելու, հանրային կյանքը կազմակերպելու գործում մտավորականների, նշանավոր գործիչների, բարերարների դերը արժևորելու և ժողովրդի ընկալումներում պատկառանքի և ընդօրինակման միջոց դարձնելու նպատակով եկեղեցու մոտ հուղարկավորվել են մեկ տասնյակից ավելի հայորդիներ: Եկեղեցու հարավ–արևմտյան մասում եղել է Արցախի թեմի առաջնորդ Անդրեաս արքեպիսկոպոս Կ. Պոլսեցու տապանաքարը՝ վախճանված 48 տարեկանում, 1882 թվականի սեպտեմբերի 18–ին, հարավային կողմում՝ Թադևոս Բաբայանց Թամիրյանցի (1832–1899, 8 դեկտեմբերի) սև մարմարից տապանաքարը, ինչպես նաև՝ Միքայել Թամիրյանցի (7 նոյեմբեր 1878 – 25 օգոստոսի 1903), Արտեմ Աբրահամյանի (Տեր Մարտիրոսյան, 1881 մարտի 3, վախճ. 1906 հուլիսի 14–ին), Մարգար Համբարձումյան Ժամհարյանցի (1878–1905 թ. օգոստոսի 16–ին), Պողոս Գասպարյան Ալեքսանյանցի (17 փետրվարի 1872 թ. 44 տարեկան) տապանաքարերը[14]:

Անգնահատելի է Շուշիի եկեղեցիների, մասնավորապես՝ Ս. Ամենափրկիչ եկեղեցու դերակատարությունը Արցախի և Այսրկովկասի հայկական մյուս գավառների հայության կրթության և մատաղ սերնդի դաստիա–

13 Տե՛ս **«Արձագանք»**, Թիֆլիս, 1887**,** N 23, էջ 341,տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. Պ–56, ց, 12, գ. 538, ց. 18, գ. 542, 746, թ. 259–260, ֆ. 57 Պ, ց. 3, գ. 44, թ. 7–14:

14 Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 319, ց. 1, գ. 415, թ. 35, 36, 36 ա, 37, 37 ա:

ռակության կազմակերպման գործում: Եթե Շուշիի մյուս եկեղեցիներին կից գործում էին սոսկ ծխական դպրոցներ, ապա առաջնորդանիստ կենտրոն Ղազանչեցոց եկեղեցու քահանաները և, առավելապես, թեմի առաջնորդները զբաղվում էին թեմական դպրոցի կրթամշակութային աշխատանքների կազմակերպման գործով:

1837 թ., ցարական կառավարության հրամանագրով, արգելվեց Բազելի՝ դեռևս 1823 թվականից Շուշիում հաստատված բողոքական քարոզչական ընկերության գործունեությունը[15]: Նույն թվականին էլ կայսերական հրամանով Շուշի փոխադրված Ղարաբաղի թեմի կոնսիստորիայի նախագահ նշանակվեց ժամանակի նշանավոր քաղաքական-մշակութային գործիչ, Հասան-Ջալալյան մեծանուն տոհմի շառավիղներից՝ Բաղդասար միտրոպոլիտը (1775-1854 թթ.), որը մեծագույն նպաստ բերեց Արցախի կրթական-մշակութային կյանքի աշխուժացմանը: Նրա ջանքերով էլ 1838 թ. հիմնվեց Շուշիի թեմական դպրոցը, որն անուրանալի դերակատարություն ունեցավ արցախահայության կյանքում: Սկզբում դպրոցն ուներ 3 դասարան, որտեղ սովորում էին 65 աշակերտներ, դասավանդում էին 2 ուսուցիչներ[16]: 1886/87 ուսումնական տարում թեմականն արդեն ուներ 359 աշակերտ, 1893-1896 թվականներին՝ 400-500, իսկ 1896-1904 թվականներին՝ 506-588 աշակերտ[17]:

Թեմական դպրոցը Շուշիի ամենանշանավոր շենքերից մեկն էր, որը գտնվում էր հետագայում Լոռիս-Մելիքյան անունը կրող փողոցի կենտրոնական մասում, Սեյրանանց աղբյուրի մոտ, առաջնորդարանի շենքի հարևանությամբ: Թեմականի շինարարությունը սկսվել էր 1830-ական թվականներին և, որոշ ընդհատումներից հետո, ավարտին հասցվել 1870-ական թվականներին՝ Սարգիս Ջալալյանցի ժամանակ: Շենքը կառուցված էր սրբատաշ խոշոր քարերից և բաղկացած էր մեկ կիսանկուղային և երկու լրիվ հարկերից: Կիսանկուղային հարկը բաղկացած էր յոթ սենյակներից, որտեղ զետեղված էին գրադարանը, հանդերձարանը, դպրոցի տպարանը: Երկրորդ և երրորդ հարկերում կային 15 դասասենյակներ, տեսչանոց, ուսուցչանոց և 450 հանդիսատեսի համար նախատեսված դահլիճ, որի պատերից կախված էին պատմական թանկարժեք նկարներ: Դպրոցն ուներ ընդարձակ բակ, որտեղ կային բազմաթիվ ու բազմատեսակ մարմնամարզական հարմարություններ[18]: Ցավոք, մեր ժողովրդի համար կար-

15 Տե՛ս **«Մեղու Հայաստանի»,** Թիֆլիս, 1885, N 53, 11 յուլիսի, էջ 1-3:
16 Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 56, գ. 3, փ. 293:
17 Տե՛ս **«Փայլակ»,** Շուշի, 1915, 23 հուլիսի, N 39:
18 Տե՛ս **Կիսիբեկյան Ա.**, Հուշեր, հատ. 1, Եր., «Առասպել ինդեքս» հրատ., 2011, էջ 176:

ևոր դերակատարություն ունեցած այդ կրթական հաստատության շինությունն այսօր գոյություն չունի:

Դրամական միջոցների բացակայության պայմաններում թեմական դպրոցը 1844 թ. փակվում է: Թեմի առաջնորդի խնդրանքով, ժողովրդի կողմից որոշ միջոցներ հատկացնելուց հետո, դպրոցը 1845 թ. օգոստոսի 17-ին նորից վերաբացվում է: Ստեղծվում է հոգաբարձուների խորհուրդ, որը հաճախակի հանգանակություններ էր կատարում ինչպես Շուշիում, այնպես էլ՝ Բաքվում, Թիֆլիսում, Մոսկվայում: Թեմականի բյուջեն օրեցօր կայունանում էր:

Թեմական դպրոցի հիմնական բարերարներն էին շուշեցի մեծահարուստներ Աղա Անդրեաս-բեկ և Սարգիս-բեկ Քալանթարյանները, Անդրեաս և Մարտիրոս Խանդամիրյանները, Համբարձում-բեկ Սարուխանբեկյանը, Կարապետ Ղուլյանը, Համբարձում Խաչատրյանը, Սիմոն Կոստանդյանը, Համբարձում աղա Հախումյանը, Բաբա Բեգլարյանը, Պետրոս Աղամալյանը, ղուբացի հայ տորոնագործներ Պողոս Գասպարյան-Ալեքսանյանցը, Սահակ Բեհլամյանցը, մոսկվայաբնակ ժամհարյան եղբայրները:

Բաքվում հանգանակությունները կազմակերպում էին ծագումով շուշեցիներ Մարկոս Դոլուխանյանն ու Իսրայել Բեգլարյանը, իսկ բաքվաբնակ Մուսայել Շահկեդանյանը խանութ նվիրեց դպրոցին: 1893 թ., մոսկվայաբնակ Անդրեաս Խանդամիրյանի կտակի համաձայն, 20200 ռուբլի պահ է տրվում Մոսկվայի պետական բանկին, և ստացված տոկոսները՝ 900 ռուբլի, դրվում են հոգաբարձուների տրամադրության տակ[19]: Արցախի թեմի առաջնորդ Աշոտ եպիսկոպոս Շախյանը 1910 թ. Բաքվում և Թիֆլիսում հանգանակեց 25130 ռուբլի[20]: 1913 թ. թեմական դպրոցի 75-ամյա հոբելյանը նշելու համար Վերին Թաղավարդ գյուղից սերված, մոսկվայաբնակ վաճառական Բաղդասար Արզումանյանը կատարեց 200 000 ռուբլու աննախադեպ նվիրատվություն[21]: Նույն թվականին Միքայել Արամյանցը Շուշիում գտնվող 30 000 ռուբլի արժողության տունը նվիրեց թեմական դպրոցին[22]: Բաբկեն և Ջավեն վարդապետները 1913 թ. թեմականի համար հանգանակել են շուրջ 600000 ռուբլի[23]: Մինչ այդ՝ Մաթևոս կաթողիկոսի կոնդակով, 1861 թ. Արցախի թեմի վանքապատկան կալվածքների կառա-

19 Տե՛ս **Լէօ,** Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգեւոր դպրոցի (1838-1913), Թիֆլիս, Հրատարակութիւն նոյն տպրոցի հոգաբարձութիան, 1914, էջ 189, 192-193, 265-268, 464-465, 560:

20 Տե՛ս **նույն տեղում**, էջ 598:

21 Տե՛ս **նույն տեղում**, էջ 629:

22 Տե՛ս **նույն տեղում**, էջ 633:

23 Տե՛ս **Քոչարյան Ա.**, Շուշիի հայոց թեմական հոգևոր դպրոցի հիմնադրման 75-ամյակի տոնակատարություններն ըստ արխիվային վավերագրերի, «Կաճառ», N 6, 2012, Շուշի, 2014, էջ 68:

վարումը հանձնվել էր Շուշիի թեմական դպրոցի հոգաբարձուներին, որպեսզի ստացված գումարով պահվեր դպրոցը[24]:

Թեմականի ուսուցիչները կրթական բարձր պատրաստություն ունեին: Նրանց մեծ մասն ավարտել էր Ռուսաստանի և եվրոպական երկրների նշանավոր ուսումնական հաստատությունները: «Մեղու Հայաստանի» թերթի լրագրողը գրել է. «... ուսուցչական խումբը բաւական ընտիր է Շուշու հոգևոր ազգային դպրոցում, հոգեբարձուք դպրոցասէր և հոգացող ...»[25]: Տարբեր տարիների այստեղ դասավանդել են հայ գրականության ու մշակույթի նշանավոր դեմքեր և ազգային գործիչներ Պերճ Պռոշյանը, Մակար Բարխուդարյանցը, Սեդրակ Մանդինյանը, Պետրոս Շանշյանը, Մանուկ Աբեղյանը, Լևոն Մանվելյանը, Երվանդ Լալայանը, Արտաշես Կանայանը, Ստեփան Դեմուրյանը, Վրթանես Փափազյանը, Սպիրիդոն Մելիքյանը, Հրաչյա Աճառյանը, Արշակ Չիլինգարյանը, Նիկոլ Աղբալյանը, Լևոն Թախտաջյանը (ակադեմիկոս Արմեն Թախտաջյանի հայրը), Ավետիք Տեր–Պողոսյանը, Հայրապետ Մուսայելյանը, Խաչիկ Սամվելյանը, Արշալույս Աստվածատրյանը, Գարեգին Խաժակը և ուրիշներ: Նրանց շնորհիվ թեմականում և մյուս դպրոցներում փոխվել են ուսուցման, դաստիարակության հին ձևերը, կազմվել նոր ուսումնական պլաններ, ծրագրեր, դասագրքեր:

Թեմականի բազմաթիվ սաներ, իրենց կրթությունը շարունակելով արտասահմանյան բարձրագույն հաստատություններում, դարձել են նշանավոր գիտնականներ, մշակութային, հասարակական, պետական գործիչներ, որոնցից են Սիմոն Հախումյանը, Կոստանդին Մելիք–Շահնազարյանցը (Տմբլաչի Խաչան), Լեոն, Մուրացանը, Արսեն Տերտերյանը, քիմիկոս Հակոբ Հովհաննիսյանը, Գաբրիել Գուլիքևխյանը և ուրիշներ:

Թեմականն Արցախի և, մասնավորապես, Շուշիի հայության կյանքում անփոխարինելի տեղ ուներ: Այնքան մեծ էր նրա ժողովրդականությունը, որ 1913 թվականին դպրոցի 75–ամյակի հոբելյանական միջոցառումները վեր էին ածվել համընդհանուր տոնի, ինչի կապակցությամբ ժամանակակիցը գրել է. «Եկեղեցում ասեղ գցելու տեղ չկար, հայերից շատերը խանութները փակել են և եկել եկեղեցի, այդտեղ են և տեղւոյս ռուսաց պրոգիմնազիայի բարձր դասարանների աշակերտները, իրենց ուսուցիչների հետ միասին, այդտեղ են արհեստաւորները ու համքարական դրոշակակիրները, ձեռքներին բռնած երփներանգ դրոշակները: ...յարակից փողոցներն ու տների պատշգամբները լեփ–լեցուն էին հազարաւոր ամբոխով»[26]:

---

24 Տե՛ս **«Փայլակ»,** Շուշի, N 64, 21 օգոստոսի, 1916:
25 **«Մեղու Հայաստանի»**, Թիֆլիս, 1880, 3 սեպտեմբերի, N 67, էջ 2:
26 **«Բագուի ձայն»**, Բագու, 1913, 24 օգոստոսի, N 119:

Թեմականում ազգային դաստիարակությունը բարձր հիմքերի վրա էր դրված: 1903 թ., երբ ցարական հրովարտակով փակվեցին հայկական դպրոցները, նույն ճակատագրին արժանացավ նաև թեմականը: Մի շարք ուսուցիչներ ձերբակալվեցին: Թեմականի շրջանավարտներից մեկը՝ Աբրահամ Կիսիբեկյանը, 1903 թ. դեպքերի մասին գրել է. «Վերցրինք մեր գրքերը, մեր ուսուցիչը նորից կրկնեց ու պատվիրեց մեզ սիրել մայրենի լեզուն և պինդ պահել, չմոռանալ մեր սիրելի դպրոցը: ...Նրա արցունքները թափվում էին, նա այլևս իրեն զսպել չկարողացավ ...: Չկար այլևս մեր սիրելի ու անզուգական Թեմական դպրոցը, բայց նա խորն էր թափանցել մեր հոգու մեջ և նա դրել էր արդեն մեր կյանքի հիմնաքարը՝ լինել միշտ անձնվեր դեպի այդ ժողովրդի լեզուն, կուլտուրան ու նրանից ոչինչ չխնայել»[27]: Դպրոցների վերաբացումից հետո թեմականը շարունակել է գործել մինչև 1920 թվականի մարտյան ողբերգական դեպքերը: Հայկական թաղամասի հետ միասին՝ թուրքերը ուսումնական այդ հաստատությունը նույնպես հրո ճարակ դարձրին:

Աղջիկների կրթության և դաստիարակության հարցերով մտահոգ առաջնորդարանը և հայ մտավորականները 19-րդ դարի 30-ական թվականներից Շուշիում ձեռնամուխ են եղել նաև իգական դպրոցների բացման գործին: Տպավորիչ էր հատկապես շուշեցի մեծահարուստ Պողոս, Արշակ, Հակոբ և Աբրահամ Ղուկասյան եղբայրների նախաձեռնությունը: Նրանք իրենց հանգուցյալ քրոջ հիշատակը հավերժացնելու նպատակով Ս. Ամենափրկիչ եկեղեցուն են տրամադրում 200.000 ռուբլի և Շուշիում գտնվող 40.000 ռուբլի արժողությամբ իրենց տունը՝ Մարիամ Ղուկասյան անունով օրիորդաց դպրոց հիմնելու համար: Այդ ծրագիրը պետք է արժանանար նաև Ամենայն Հայոց կաթողիկոսի հովանավորությանը: Դպրոցը կառավարելու համար Ղազանչեցոց Ս.Ամենափրկիչ եկեղեցու ծուխը հոգաբարձական խորհրդի կազմ է ընտրում: Խորհրդի ղեկավար է ընտրվում Ղարաբաղի Հայոց հոգևոր թեմի առաջնորդը: Դպրոցը բացվել է 1914-1915 ուսումնական տարում և ունեցել է լրիվ միջնակարգ դասընթաց:

Ընդհանուր առմամբ, արցախահայության համար կենսական հարցերի լուծման նպատակով, առաջնորդարանն ինչ-որ ձևով համակարգում էր բերդաքաղաքի մեծահարուստների լուսավորական, կրթական, մշակութային, աղքատախնամ, բարեգործական և այլ բնույթի ծրագրերը: «Հայոց բարեգործական ընկերության» Թիֆլիսի խորհուրդը 1881 թ. դեկտեմբերի 22-ին որոշում է բերդաքաղաքում բացել իր մասնաճյուղը[28]: Բարեգործականի Շուշիի մասնաճյուղի գործունեության մեկնարկը տրվեց 1882 թ.

27 **Կիսիբեկյան Ա.,** Հուշեր, հատ. 1, էջ 123:
28 Տե՛ս «**Արձագանք»,** Թիֆլիս, 17 ապրիլի, 1883, N 16, էջ 229:

փետրվարի 28-ին՝ Ղարաբաղի Հայոց հոգևոր թեմի առաջնորդ Անդրեաս արքեպիսկոպոսի ձեռամբ՝ թեմական դպրոցի 46-ամյակին և օրիորդաց դպրոցի 6-ամյակին նվիրված միջոցառման ժամանակ[29]:

Այդ կազմակերպական հարցերի լուծումից հետո երեք տասնամյակների ընթացքում շուշեցի մեծահարուստները՝ Հախումյանները, Թառումյանները, Ժամհարյանները, Ղուկասյանները, Խանդամիրյանները, Թադևոս Թամիրյանը, Արաֆելյանը, Միրզաջան Խաչատրյանը, Ավագ Սարգսյան Մասիրխանյանցը, Աղամյանը, Եսայի Արզումանյան-Թունիբեկյանը, Ավետիս Ղարաբեկյանցը, Իսահակ Թադևոսյանցը, Առաքել Բաբայանը, Պողոս Գասպարյան-Ալեքսանյանցը և շատ ուրիշներ մի քանի միլիոն ռուբլի են հատկացրել հայրենի քաղաքի բարգավաճմանը:

1837 թվականից, թեմի առաջնորդ Բաղդասար մետրոպոլիտի նախաձեռնությամբ, զարկ է տրվում նաև տպագրական գործին: 1854 թ., նրա մահվանից հետո, նույն նախանձախնդրությամբ այդ գործը շարունակում է Գևորգ եպիսկոպոս Վեհապետյանը: Վերջինս հայ մեծահարուստների նվիրատվությամբ պահվող տպարանն անվանում է «տպարան սրբոյ Էջմիածնի», որտեղ հրատարակվում են կրոնական, գեղարվեստական, պատմագիտական, փիլիսոփայական, քերականական բովանդակությամբ գրքեր:

Արցախի թեմի առաջնորդներն ու հոգևոր դասի ներկայացուցիչները մեծ հոգատարություն են ցուցաբերել նաև անցյալից մնացած ժառանգությունը՝ ձեռագիր մատյանները պահելու և ապագա սերունդներին փոխանցելու գործում: Շուշիից մեզ են հասել 20, Ջակամա երկրից՝ 35, Շամախուց՝ 15 ձեռագրեր[30]: 1762 թ. Շուշիում ձեռագիր մատյան է թողել Ռեթեոս վարդապետի աշակերտ Գրիգոր աբեղան[31]: Պահպանվել է 1791-1792 թվականներին Շուշիում ընդօրինակված մատյաններից մեկը: Հիշատակարաններից մեկը գրվել է Շուշիում՝ 1822 թ., Հայրումյան պարոն Գևորգի և նրա որդի Ալեքսանի տանը[32]: Չնայած 19-րդ դարի սկզբներից Շուշիում հիմնվել էր տպագրական գործը, այնուամենայնիվ, ազգային լավագույն ավանդույթների համաձայն, բերդաքաղաքում շարունակվում էր դարերից եկած մատյանների ընդօրինակումը: Այդ անխոնջ երախտավորներից էր Հովսեփ Արցախեցին, որը 1831 թ. ընդօրինակել է «Գիրք տեսական փիլիսոփայութեան», «Հաղագս տրամաբանութեանը» և Պաղտասար դպիրի բանաստեղծությունների

29 Տե՛ս «**Գործ»,** Թիֆլիս 1882, N 1, էջ 86:

30 Տե՛ս **Հակոբյան Հ.,** Արցախ-Ուտիքի մանրանկարչությունը 13-14-րդ դարում, Եր., «Սովետական գրող» հրատ., 1989, էջ 32:

31 Տե՛ս **Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց**, հատ. Ա., Եր, ՀՍՍՀ ԳԱԱ հրատ., 1984, էջ 109:

32 Տե՛ս **նույն տեղում**:

ժողովածուն: 1850 և 1863 թվականներին Շուշիում անհայտ հեղինակի կողմից ընդօրինակվել են բանասիրական բնույթի ժողովածուներ[33]:

19–րդ դարում Շուշիում ընդօրինակվել է Մովսես Կաղանկատվացու «Պատմություն Աղվանից»–ի առավել ամբողջական տարբերակը, Հարություն Ալամդարյանի «Համառոտ բառարան ի ռուսաց լեզվի ի Հայս», Միքայել Աստապատցու «Բժշկարանն» ու «Տոմարական աղյուսակը», Հարություն Մելքոնյանի «Քերականություն հայկազյան լեզվին», գեղարվեստական գրականության գլուխգործոցներ՝ «Պատմություն Պղնձե քաղաքին», «Պատմություն աղջկան և մանկան», «Խրատ Խիկարոյ», «Խրատ Նուշիրվանի», «Վարք Աղեքսանդրի» և «Բախտագուշակ»–ը: Այս վերջին ձեռագրի հեղինակը շուշեցի Անդրեաս Մուսայելյանն է[34]:

Ձեռագրերի հավաքման և պահպանման գործում անուրանալի աշխատանք է կատարել Խաչիկ վարդապետ Դադյանը: 1880–ական թվականներին, Շուշիում աշխատելու ժամանակ, նա հավաքել է շուրջ 115 ձեռագիր մատյաններ ու 600 հիշատակարաններ, հրովարտակներ՝ շահերի և այլ պետությունների ղեկավարների անունից, եկեղեցական կոնդակներ:

Դադյան տոհմի մեկ այլ ներկայացուցչի՝ Գրիգոր քահանայի մասին Լեոն գրել է. «Փշրանքները պահել է հայ հասարակ մարդու մոլեռանդ սէրը դեպի իւր հայրենի աւանդը – այժմ իսկ ականատես ենք լինում, թէ ինչպէս մի հասարակ մարդ ջուխտ աչքի պէս է պահում հին պապերից մնացած մի որևէ ձեռագիր, կամ տնային իր, լինի դա զէնք թէ զարդարանք: Դրանցից մէկն է եղել և թաղավարդցի Գրիգոր քահանայ Դադեանցը, որ վախճանուել է մի քանի ամիս սրանից առաջ Շուշիում, թողնելով իւր Սմբատ և Վահան որդիներին հին ձեռագրերի մի հարուստ ժողովածու (մինչև 33 հատ) ...»[35]:

Ղազանչեցոց Սբ. Ամենափրկիչ եկեղեցում պահպանվել են ներքոնշյալ ձեռագիր Ավետարանները.

«Ավետարան, 1420 թ., գրչ. ժամանակ, վայր և գրիչ՝ անհայտ (գտնվելու տեղն անհայտ). Ավետարան, 1460 թ., գրչ. վայր՝ Վան, գրիչ՝ Վարդան (գտնվելու տեղն անհայտ). Ավետարան, 1461 թ., գրչ. վայր՝ Վան, գրիչ՝ Վարդան, ստացող՝ Մուղալ խաթուն (գտնվելու տեղն անհայտ). Ավետարան, 1656 թ., գրչ. վայր՝ Կոստանդնուպոլիս, գրիչ՝ Ղազար, ստացող՝ Ղուկաս (գտնվելու տեղն անհայտ). Ավետարան, 1658 թ., գրչ. վայր՝ Կաֆա, գրիչ՝ Նիկողայոս (գտնվելու տեղն անհայտ). Ավետա–

33 Տե՛ս **Մատենադարան,** ձեռ. N 3869, 2622:

34 Տե՛ս **Հակոբյան Հ.,** Շուշիի մատենական ժառանգությունը, «Շուշին հայոց քաղաքակրթության օրրան», գիտաժողովի նյութեր, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2007, էջ 274:

35 **Բաբախանյան Առ.**, Մի քանի հնութիւններ, «Արձագանք», Թիֆլիս, 1885, 1 սեպտեմբերի, N 9, էջ 121:

ման, գրչ. ժամանակ՝ անհայտ, գրչ. վայր՝ Խաչմաչ, գրիչ՝ Աղեքսանդր եպս., ստացող՝ Թադեոս քհն. (գտնվելու տեղն անհայտ). Ավետարան, գրչ. ժամանակ՝ անհայտ, գրչ. վայր՝ Հերմոնի վանք, գրիչ և ծաղկող՝ Եսայի (ՄՄ ձեռ. 9431). Ավետարան, գրչ. ժամանակ, վայր և գրիչ՝ անհայտ (գտնվելու տեղն անհայտ). Ավետարան, գրչ. ժամանակ, վայր և գրիչ՝ անհայտ (գտնվելու տեղն անհայտ) Ավետարան, գրչ. ժամանակ, վայր և գրիչ՝ անհայտ (գտնվելու տեղն անհայտ). Ավետարան, գրչ. ժամանակ, վայր և գրիչ՝ անհայտ (գտնվելու տեղն անհայտ). Ավետարան, գրչ. ժամանակ, վայր և գրիչ՝ անհայտ (գտնվելու տեղն անհայտ) Սաղմոսարան, գրչ. ժամանակ, վայր և գրիչ՝ անհայտ (գտնվելու տեղն անհայտ)»[36]:

Ըստ Մ. Բարխուդարյանցի՝ եկեղեցում պահվել են նաև մասունքներ, որոնց թվում էր. «Մասն Սրբոյն Գրիգորիսի Աղուանից կաթուղիկոսի՝ մի արծաթեայ ոսկեզօծեալ աջում. Որ ունի այս արձանագրութիւնն. «Այս է աջ սրբոյն Գրգիգորիսի Աղուանից կաթուղիկոսին թոռին սրբոյ Լուսավորչին. Նորոգող սորա տէր Յովհաննէս որդի Տաւութին թոռն Պաղդասարին, որ է որդի Մէհրապ պէկին տեառն Խաչէնոյ թվ. ՌՀ»[37]: Եկեղեցու «արեւմտեան գաւթի հիւսիսային կողմում ամփոփուած է Անդրէաս եպիսկոպոսի մարմինն, որի տապանաքարի վերայ քանդակուած է թագ, գավազան եւ իր տիտղոսների ձեւերն եւ արձանագրութիւնն. «Վիճակաւոր առաջնորդ Թեմին Հայոց Արցախայ Անդրէաս արքեպիսկոպոս Պոլսեցի վախճանեալ է 8 Սեպ. 1882 ամի ի հասակի 48 ամաց»»[38]:

4. Ղազանչեցոց եկեղեցին՝ թուրք-թաթարական ջարդարարների թիրախում

20-րդ դարասկզբից Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցու համար սկսվում են ծանր ժամանակներ: 1903 թ. ցարական կառավարության կողմից պետականացվեց հայ եկեղեցուն պատկանող գույքը, փակվեցին հայկական դպրոցները: Դրան հաջորդեցին 1905-1906 թթ. հայ-թաթարական ընդհարումները: Այդ կռիվները ոչ մի տեղ այնքան արյունալի, կատաղի ու կորստաբեր չեն եղել, որքան Ղարաբաղում և, մանավանդ՝ նրա կենտրոն Շուշիում:

---

36 **Մինասյան Թ.,** Արցախի գրչության կենտրոնները, Եր., «Նաիրի» հրատ., 2015, էջ 93:

37 **Բարխուդարյանց Մ**., Արցախ, Աղվանից երկիր և դրացիք, Եր., «Գանձասար» հրատ., 1999, էջ 233:

38 **Նույն տեղում**:

Թուրք-թաթարական ջարդարարների թիրախում հայտնվեցին Շուշիի եկեղեցիները: Թալանվեց ու պղծվեց Ագուլեցոց եկեղեցին: Հայ պաշտպաններին հաջողվեց փրկել մայր տաճարը՝ Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցին:

Հասարակական կարծիք ձևավորելու նպատակով Արցախի թեմի առաջնորդ Աշոտ եպիսկոպոսը 1905 թ. մարտի 29-ին հեռագիր է ուղարկում «Արշալոյս» թերթի խմբագրությանը՝ խնդրելով այն զետեղել թերթի էջերում[39]: Ջարդերի հետագա ընթացքը և այդ ամենին ռուսական զորքերի մասնակցությունը կանխելու նպատակով Աշոտ եպիսկոպոսը հայ պատգամավորների միջոցով մեկ այլ հեռագիր էլ ուղարկում է փոխարքային, որում մասնավորապես ասված էր. «Գիւղերը աւերուած են բառիս բուն նշանակութեամբ: Աւերուել, կողոպտուել են կոզակների կողմից, որոնք կատարեալ ազատութիւն էին ստացել իրանց ղեկավարներից: ...Ջահաթաղ, Թաղ, Տօղ և Ճարտար գիւղերում ռմբակոծեցին տները թնդանոթներով: Դրագունները Տօղում հրդեհեցին տները, գոյքը, երկիւղից եղել են երեխաների մահւան դէպքեր, կանանց վիժումներ, խելագարութիւներ»[40]:

Հայ-թաթարական ընդհարումներից հետո, տասնյակ որբ երեխաներին խնամելու նպատակով, Բահաթրյան ամուսինների նախաձեռնությամբ, Շուշիում բացվեց որբանոց, որտեղ կազմակերպվում էր նաև դպրոցական կրթություն: Որոշ հանգամանքների բերումով, սակայն, Բահաթրյան ամուսինները հեռանում են Շուշիից, և որբանոցն անտերության է մատնվում: Այդ հոգսն իր վրա է վերցրնում եկեղեցին՝ ստեղծելով հոգաբարձուների խորհուրդ[41]:

1920 թ. Շուշին վերստին հայտնվեց թուրք-ադրբեջանական զավթիչների թիրախում: Մեծաքանակ զորքեր կենտրոնացնելով Շուշիում՝ նրանք, 1920 թ. մարտի 23-ին, հրի մատնեցին և թալանեցին հայկական թաղամասը: Խաղաղ բնակչության սարսափելի սպանդ կազմակերպվեց: Հազարավոր հայեր զոհվեցին, հրի մատնվեց քաղաքի հայկական թաղամասը: Հայերի՝ կրակի ճարակից փրկված գույքը բաժին հասավ թուրքերին: Այդ կոտորածին զոհ դարձավ նաև թեմի առաջնորդ Վահան եպիսկոպոսը: Բնակչության շրջանում սարսափ տարածելու նպատակով՝ թուրքերը, նրա գլուխը ցցին խրած, պտտվում էին քաղաքում[42]:

---

39 Տե՛ս **«Արշալոյս»,** Թիֆլիս, 1906, 30 մարտի, N 69:

40 **Նույն տեղում**:

41 Տե՛ս **«Ղարաբաղ»,** Շուշի, 1911, 15 դեկտեմբերի, N 8:

42 Տե՛ս **Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարան**, ֆ.2, գ.5, էջ 107; **Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան,** գիրք Թ, Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմը (1813-1933 թթ.), Եր., Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր արխիվային գործի վարչության հրատ., 2001, էջ 749:

Շուշիում տեղի ունեցած կոտորածների և, մասնավորաբար, հոգևորականության նկատմամբ կատարված բռնարարքների նկարագրությամբ կոնսիստորիայի անդամ Կարապետ քահանա Վարդապետյանցը հատուկ զեկուցագիր է ուղարկել Ամենայն Հայոց կաթողիկոսին՝ միաժամանակ խնդրելով նշանակել թեմի նոր առաջնորդ. «Տարւոյս մարտի 10, 23-ին Շուշում սկսած կռիվները խաչ դրին քաղաքի հայկական թաղի վրայ: Այրւեց հայոց ամբողջ քաղաքամասը... Վահան եպիսկոպոսը սպանւեց առաջնորդարանում, չկամենալով դուրս գալ: Առաջնորդարանը, թեմական դպրոցը, եկեղեցիները թալանւած են, ապա այրւած: Կռիվը սկսւելով առաւօտեան ժամը 5-ին՝ հնարաւորութիւն չի եղել կոնսիստորիայից ոչ մի դոկումենտ, ոչ մի գործ ու գանձ ազատել, նոյնպէս և եկեղեցիներից»[43]:

Նույն վավերագիրը հաղորդում է նաև, որ «Վահան եպիսկոպոսի սպանութեան մասին մեզանից յետոյ դուրս եկած հայ ոստիկանապետ Աւետիք Տէր-Ղուկասեանը պատմում է, որ նոյն օրը երեկոյեան ժամը 10-ին ինքը կարողացել է մտնել Սրբազանի մօտ և յայտնել, թէ այլևս հնար չկայ մնալու, պէտք է կամ փախչել, կամ մի կերպ ընկնել Սուլթանովի մօտ: Սրբազանը պատասխանել է, թէ առաջնորդարան և կոնսիստորիա չեմ թողնիլ և չդուրս գալ և վստահ, որ թուրքերն իրան ձեռք չեն տալ, յամառում է ու նստում...»[44]:

Ըստ վերոնշյալ վավերագրի՝ «Կոնսիստորիայի կողմից սպանւած են՝ անդամ Խորեն ա. քահ. Իսկանդարեանը, կարգապահ Անանիա Տէր Դանիէլեանը և դիւանապահ Յովհաննէս Ղարաբէկեանը: Քահանաներից սպանւած է Յարութիւն ա. քահ. Վարդապէտեանը ...: Այսպէս ահա չկայ հոգևոր վարչութիւն և մնացել ենք մի անդամ ու մի ատենադպիր»[45]:

1920 թ. մայիսին Արցախում խորհրդային կարգերի հաստատվելուց և, այնուհետև, երկրամասն Ադրբեջանին բռնակցվելուց հետո առավել ծանր վիճակում հայտնվեցին եկեղեցիները, այդ թվում՝ առաջնորդանիստ Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչը, որը դադարեց գործել: Արցախի թեմի առաջնորդ Վրթանես վարդապետը, Շուշիում համապատասխան գործունեություն ծավալելու անհնարինության պատճառով, տեղափոխվեց Գանձասար:

Ադրբեջանի իշխանությունների կտրուկ մերժողական դիրքորոշմամբ պայմանավորված, հակառակ Ամենայն Հայոց Ա կաթողիկոսի գործադրած ջանքերի, 1933 թվականին փակվեց Ղարաբաղի Հայոց հոգևոր թեմը: Այդպես Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը դարձավ երկրագնդի վրա միակ հայաբնակ տարածքը, որտեղ արդեն 1930-ական թվականներից

43 **Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան**, գիրք Թ, էջ 747:
44 **Նույն տեղում**:
45 **Նույն տեղում**:

չկար որևէ գործող եկեղեցի: Երկրամասում աննախադեպ թափ ստացավ քրիստոնեական բոլոր կառույցների ոչնչացման գործընթացը: Այդ քաղաքականության հետևանքով «Ղազանչեցոց եկեղեցին գոմանոցի վերածած, դռներ, պատուհաններ հանած, ատեանի վերին կամարից երկու տեղ ծռված...»[46] վիճակում էր: Քանդվեցին եկեղեցու տանիքի վեղարի, կողապատերի սրբատաշ քարերը, քիվերը, քերվեցին քանդակներն ու արձանագրությունները, գմբեթավոր սյուների ու պատերի տակ խարույկներ վառվեցին: 1958 թ. օգոստոսի 26-ին Ամենայն Հայոց Վազգեն Ա կաթողիկոսը գրություն է հղել ՀԽՍՀ նախարարների խորհրդին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի (ՀԵԳԽ) նախագահ Ս. Գասպարյանին, որում անդրադարձել է նաև այս եկեղեցու վիճակին. «Ողբալի կացության է մատնված Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքի Ս.Ամենափրկիչ եկեղեցու շենքը, որը ճարտարապետական ու պատմական մի հիասքանչ կոթող կարելի է համարել: Բարեբախտաբար այս եկեղեցին ամբողջությամբ դեռևս կանգուն է, փլված է միայն կենտրոնական գմբեթը և որոշ ավերածության է ենթարկված շենքի ներսը: Անցյալ 1957 թ. սեպտեմբերին, երբ անձամբ այցելեցի այս եկեղեցին, ... ականատես եղանք աննկարագրելի մի տեսարանի: Բացի փլված գմբեթից, եկեղեցու բոլոր դռներն ու պատուհանները հանված էին, երբեմնի այս աղոթավայրը ուղղակի վեր էր ածվել անասունների ախոռի ...: Այդ պահին մեզ հետ էր նաև Ադրբեջանական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Կրոնից Գործերի լիազոր պ-րն. Մամեդովը: Նա ևս մեզ հետ միասին վրդովվեց այդ տեսարանով և համաձայնվեց, որ ճարտարապետական և պատմական այդ հոյակապ կոթողի նման ողբալի վիճակը հետևանք է դատապարտելի անտարբերության: Հենց տեղվույն վրա մենք պայմանավորվեցինք պ-րն. Մամեդովի հետ, որ տեղական իշխանությունները ձեռք կառնեն ամենատարրական միջոցները եկեղեցու շենքը հետագա ավերածությունից պաշտպանելու համար՝ ներսը մաքրելու և շենքի դռներն ու պատուհանները հասարակ տախտակով գամելու, որպեսզի անասունները չմտնեն, մինչև որ հնարավոր լինի հնությունների պահպանման պետական պատկան մարմինների միջոցով նորոգելու այդ եկեղեցին, որ իբրև պատմական ու ճարտարապետական հնություն կարող է միայն պատիվ բերել որևէ քաղաքի: Ահա անցել է 1 տարի, սակայն մեր ունեցած տեղեկությունների համաձայն ոչ մի միջոցառում չի կատարված և եկեղեցին մնում է նույն անմխիթար վիճակում»[47]:

---

46 **ՀԱԱ**, ֆ. 319, ց. 1, գ. 415, թ. 41:

47 Վազգեն Ա Կաթողիկոսի նամակը ՀԵԳԽ-ի նախագահ Ս.Գասպարյանին՝ Պյատիգորսկում, Լեռնային Ղարաբաղում և Նախիջևանում հայկական եկեղեցիների ողբալի վիճակի և դրանց պահպանությունը, խնամքը, նորոգումը ապահովելու

Ղազանչեցոց եկեղեցու հարավ–արևելյան հատվածում գտնվող ամենահին հայկական գերեզմանատունը հիմնովին ավերվեց, ու քաղաքը կառուցած հայ մարդկանց շիրիմների վրա բնակարաններ կառուցվեցին: Որպես շինանյութ՝ թուրքերն սկսեցին օգտագործել հայատառ արձանագրություններով շիրմաքարերը: 1970–ական թվականներին հանվել ու ջարդվել է նշանավոր «Պեխի աղբյուր»–ի հայատառ արձանագրությունը: 1971 թ. նախկին շուշեցի Արտաշես Առուշանյանը գրել է. «60 տարի բացակայությունից հետո խոր ծերության հասակում եկա տեսնելու իմ հայրենի Շուշի քաղաքը: Սակայն սրտի ցավով եմ գրում, որ քաղաքը գտնվում է սոսկալի դրության մեջ: Միթե հնարավոր չէ մի քիչ բարեխղճություն ու պատասխանատվություն ցուցաբերել անցյալի ժառանգության պահպանության նկատմամբ: Այստեղ ոչնչացվում են մի ժողովրդի քրտինքով ստեղծված հուշարձանները: Այստեղ քանդում, ավերում են հայ արվեստի արժեքավոր կոթողները: Այստեղ հողի երեսից քերում են գերեզմանոցները, բնակելի տները, պատերից՝ վիմագրությունները, բարձրաքանդակները: Այստեղ նույնիսկ քաղաքի պատմության թանգարանում ոչինչ չեն ասում հայկական քաղաքամասի, հուշարձանների, նշանավոր հայ գործիչների, հեղափոխականների մասին: Տվյալ պահին Ղազանչեցոց տաճարը վեր են ածել արտաքնոցի, Կանաչ ժամ եկեղեցին՝ պահեստի, Ագուլեցոց և Մեղրեցոց եկեղեցիները քանդում են: Այս ամենը տեսնելով՝ Շուշիում հանգստացող նախկին շուշեցիներս լացում ենք: Միթե այսքան անտեր է հայ ժողովուրդը: Բա որտեղ են մեր դեպուտատները, գիտնականները, ղեկավարները: Սակայն մեր ժողովրդի հնության գանձերը պահպանելով կթեթևանա մեր ցավը: Նրանք, ովքեր կարծում են թե ոչնչացնելով մոռացության կտան մեր հիշողությունը, սխալվում են դրանով, նրանք նոր ցավ, նոր հիշողություն են առաջացնում»[48]:

Ղազանչեցոց եկեղեցու մոտ գտնվող հայկական գերեզմանոցը թուրքերի կողմից ոչնչացնելու կապակցությամբ շուշիաբնակ Անանյանը 1982 թ. ապրիլի 4–ին նամակ է գրել Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինին: Նամակում մասնավորապես ասված է. «Գերեզմանոցի շուրջն ամեն կողմից անհատական մարդիկ բնակելի շենքեր են կառուցում, տապանաքարերից շատերը մնացել են տների բակերում, քանդում – կոտրատում – փչացնում են: Տապանաքարերից շատերը վայր են գցել իրենց հիմնաքարերից, նրանց տեղը աղբանոց է դարձել...: Հարգելի Սուրբ Հայր, իմ կարծիքով բոլոր ազգերն իրենց պապական հնությունները պահպանում

անհրաժեշտության մասին, 26 օգոստոսի, 1958 թ., **«Բանբեր Հայաստանի արխիվների»**, Եր., 2001, N 1 (99), էջ 110–111:

48 **Մկրտչյան Շ.,** Արցախյան գրառումներ, Եր., «Նոյան տապան» հրատ., 2001, էջ 353–354:

են անհապաղ: Չեմ երկարացնում, կարծեմ պարզ կլինի, միայն խնդրում եմ, եթե հաճելի լինի, ուղարկեք Ձեր կողմից, կամ հնության պահպանության կոմիտեից հատուկ լիազորված մարդ, տեղում ուսումնասիրելու ...»[49]:

Հայ հանրության ճնշման տակ, 1981 թ. սկսվեցին Ղազանչեցոց եկեղեցու վերանորոգման աշխատանքները: Սակայն այստեղ էլ ամեն ինչ հարթ չէր ընթանում: Հազար ու մի խոչընդոտներ էին ստեղծվում Շուշիի թուրք ղեկավարների կողմից: Անգամ շինարարական աշխատանքները ղեկավարող բրիգադավար Վ. Բաբայանին անանուն սպառնալիքներ էին տալիս՝ պահանջելով եկեղեցու գմբեթին խաչ չտեղադրել: Նրա հավաստմամբ՝ Ադրբեջանի մշակույթի նախարարը խոստացել էր փոխել հավատը, եթե Ղազանչեցոցի վրա հանկարծ խաչ դրվի[50]: Խորհրդային տարիներին եկեղեցին այդպես էլ մինչև վերջ չվերանորոգվեց:

1988–1992 թթ. եկեղեցին գտնվում էր առավել վատթար վիճակում: 1988 թ., հայկական բերդաքաղաքից հայերին արտաքսելուց հետո, ադրբեջանցիները ջարդել էին զանգակատան հրեշտակների արձանները: Արցախյան ազատամարտի ժամանակ, նախքան 1992 թ. մայիսի 9-ին քաղաքի ազատագրումը, ադրբեջանցիները եկեղեցու շենքը դարձրել էին զինապահեստ:

1990-ական թվականներին սկսվում են Մայր տաճարի ամբողջական վերանորոգման և տարածքի բարեկարգման աշխատանքները: 1998 թ. վերանորոգվել է եկեղեցու գմբեթը, այնուհետև՝ եկեղեցին ու զանգակատունը: Վերստին այստեղ է հաստատվել Հայ Առաքելական եկեղեցու Արցախյան թեմի առաջնորդարանը: 1990-ական թվականներից ի վեր եկեղեցին, ըստ էության, դարձել էր ուխտավորների ու զբոսաշրջիկների ամենաշատ այցելվող վայրերից մեկը: Այսպես, Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ մայր տաճարը վերստանձնեց իր երբեմնի հոգևոր առաքելությունը՝ կարևոր դերակատարություն ունենալով արցախահայության հանրային կյանքում: Այս իմաստով տպավորիչ իրադարձություն էր 2008 թ. հոկտեմբերի 16-ին բարերար Լևոն Հայրապետյանի նախաձառնությամբ տեղի ունեցած մեծ հարսանիքը, որին մասնակցած 700 երիտասարդ զույգերից 500-ը պսակադրվեց Շուշիի Ղազանչեցոց եկեղեցում:

Սակայն, ճակատագրի դառն քմահաճությամբ, Շուշիին ու նրա զարդը համարվող Ամենափրկիչ մայր տաճարին այս անգամ էլ վիճակված չէր շարունակել իր պատմական առաքելությունը: 2020 թ. սեպտեմբերի 27-ին սկսված թուրք-ադրբեջանական ագրեսիայի հետևանքով թեմական

49 **Հարությունյան Հ.**, Շուշի. Քարաշեն անխոս վկաներ, Ստ., «Սոնա» հրատ., 2013, էջ 190:

50 Տե՛ս **Тер–Саркисянц А.,** Армяне Нагорного Карабаха, история, культура, традиции, М., НП ИД «Русская панорама», 2015, с. 463.

առաջնորդարանը ենթարկվեց նպատակային թիրախավորման: 2020 թ. հոկտեմբերի 8-ին Ադրբեջանի զինված ուժերի կողմից, անօդաչու թռչող սարքերի միջոցով, Ղազանչեցեց եկեղեցին երկու անգամ հրթիռակոծվեց: ԵԽ ԽՎ-ն քննարկել ու դատապարտել է «Ղազանչեցոց եկեղեցու կանխամտածված գնդակոծությունը, ինչպես նաև հակամարտության ընթացքում և դրանից հետո այլ եկեղեցիների ու գերեզմանների ավերումը կամ վնասումը»[51] :

Պատերազմից հետո, «վերականգնման» կեղծ պատրվակով, իրականացվել են շինարարական աշխատանքներ, որոնք նպատակաուղղված են հայկական քրիստոնեական սրբավայրի ձևախեղմանը: Քերվել են հայատառ արձանագրությունները, վերափոխվել է գմբեթը: Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարության որոշմամբ փորձ է արվել հայկական Ս. Ամենափրկիչ տաճարը ներկայացնել որպես ռուս ուղղափառ եկեղեցի: Զբավարարվելով այդ ամենով, ինչ-ինչ հանգամանքների ազդեցության տակ, ներկայումս էլ փորձեր են արվում այն ներկայացնելու որպես «աղվանական» եկեղեցի: Այս ամենը հակասում է համաշխարհային մշակույթի պաշտպանության ու պահպանման նպատակներով կյանքի կոչված միջազգային կառույցի՝ ՅՈՒՆԵՍԿՈ-ի կողմից հաստատված կանոնակարգին:

Այսպիսով, 18-րդ դարի երկրորդ կեսին Շուշիի Ղազանչեցոց հայկական թաղամասի բնակչության հոգևոր կարիքները բավարարելու համար, քարե հիմքերի վրա սկզբում կառուցվել է փայտաշեն, այնուհետև՝ քարաշեն եկեղեցի: 1868-1888 թվականներին խարխուլ եկեղեցու տեղը Շուշիի հայ ազգաբնակչության և տեղի բարերարների միջոցներով կառուցվում է նոր Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ հոյակերտ տաճարը:

Հարկ է նկատել, որ, մինչև հիշյալ նոր եկեղեցու կառուցումը, դեռևս 18-րդ դարի վերջերից Շուշիի Ղազանչեցոց եկեղեցին արցախահայության համար արդեն իսկ կարևոր դերակատարություն ուներ հոգևոր-մշակութային և հանրային կյանքի կազմակերպման գործում: 1813 թ., Գյուլիստանի հայտնի պայմանագրով, Արցախը ռուսական կայսրության գերիշխանության տակ անցնելուց հետո, արմատական փոփոխություններ տեղի ունեցան հանրային կյանքի բոլոր ասպարեզներում: Դրանից անմասն չմնաց նաև Հայ Աղվանից կաթողիկոսական աթոռը: Ռուսական արքունիքի միջամտությամբ Եփրեմ Զորագեղցի Ամենայն Հայոց կաթողիկոսի հատուկ շրջաբերական կոնդակով 1815 թ. Աղվանից կաթողիկոսությունը վերացվում է, և նախկինում Աղվանից կաթողիկոսության մեջ ընդգրկված թեմերը միավորվում են՝ կազմելով Ամենայն Հայոց կաթողիկոսության ենթակայության տակ գտնվող մետրապոլտություն: Մետրապոլիտի աստիճան

51 https://www.aravot.am/2021/09/27/1218518/

շնորհելով Սարգիս Հասան-Ջալալյանցին՝ Եփրեմ Զորագեղցին նրան նշանակում է թեմի առաջնորդ, որին 1830 թ. նոյեմբերի 13-ից հաջորդում է Բաղդասար Հասան Ջալալյանցը:

Ռուսական կայսրության կողմից 1836 թ. մարտի 11-ին հաստատված կանոնադրությամբ՝ հայտնի «Պոլոժենիե» անվամբ, կայսրության տիրապետության տակ գտնվող Հայոց եկեղեցին բաժանվում է 6 թեմերի՝ Նոր Նախիջևանի, Աստրախանի, Վրաստանի, Շիրվանի, Երևանի և Ղարաբաղի: Այսպիսով, հիշյալ կանոնադրությամբ Ղարաբաղի թեմի կենտրոն է ճանաչվում Շուշին, իսկ թեմական առաջնորդի նստավայր՝ Ղազանչեցոց Ս.Ամենափրկիչ եկեղեցին:

Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ մայր տաճարը կարևոր դերակատարություն է ունեցել ոչ միայն Շուշիի, այլ նաև Հայոց Արևելից կողմանց հայության հանրային կյանքի, մասնավորապես կրթամշակութային, լուսավորական, որբախնամ, աղքատախնամ, ազգային գաղափարների մասսայականացման և նմանօրինակ այլ աշխատանքների կազմակերպման գործում: Այդ ամենին նոր թափ հաղորդելու նպատակով թեմական առաջնորդների միջնորդությամբ և հովանավորությամբ շուշեցի հայ բարերարները մեծ ներդրում ունեցան վերոհիշյալ ասպարեզների զարգացման գործում: Նմանօրինակ հանրային, առավել շատ՝ ազգային գործիչների դերն արժևորելու նպատակով Ղազանչեցոց եկեղեցու բակում ստեղծվել էր յուրօրինակ մի պանթեոն, որտեղ հուղարկավորվել էին մեկ տասնյակից ավելի հայորդիներ: Այդ շիրմաքարերը հայության համար պատկառանքի և խնկարկման հուշակոթողներ էին դարձել:

Ազգանպաստ լայն գործունեության պատճառով Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցին մշտապես եղել է հակահայկական ուժերի թիրախում: 1905-1906, 1920 թվականներին թուրքերը փորձել են ավերել եկեղեցին: Խորհրդային տարիներին այն վեր էր ածվել պահեստի, այնուհետև՝ գոմի: Ավերվել էին եկեղեցու գմբեթը, քանդվել՝ սրբատաշ քարերն ու քերվել՝ զարդաքանդակները:

1992 թ., Շուշիի ազատագրվելուց հետո, եկեղեցին վերանորոգվել է՝ կրկին դառնալով արցախահայության հոգևոր կյանքի կազմակերպման կարևոր օջախը:

2020 թ. 44-օրյա պատերազմի ընթացքում, հայկական քրիստոնեական տաճարը ոչնչացնելու նպատակով, թուրք-ադրբեջանական զավթիչների կողմից եկեղեցին երկու անգամ ռմբահարվել է, այնուհետև, վերանորոգման պատրվակով, հայկական հոգևոր-մշակութային կոթողը ձևախեղվել է: Ներկայումս ադրբեջանցիները, իրենց իսկ կեղծիքների մեջ խճողված, հայկական տաճարը ներկայացնում են որպես մերթ «ռուսական», մերթ էլ՝ «աղվանական:

Վահրամ Ռ. Բալայան – գիտական հետաքրքրությունների շրջանակում են Հայոց Արևելից նահանգների պատմության առանցքային հիմնահարցերը, մասնավորապես՝ արցախահայության ազգային-ազատագրական շարժման, պետականակերտման պատմությունը: Հրապարակել է 21 մենագրություն և շուրջ 120 գիտական հոդված՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն լեզուներով: Զբաղվում է նաև Հայոց Արևելից նահանգների պատմամշակութային ժառանգության հետազոտությամբ:

Էլ. հասցե՝ vahrambalayan@mail.ru

Մելանյա Գ. Բալայան – գիտական հետաքրքրությունների շրջանակում են Հայոց Արևելից կողմանց պատմության հիմնահարցերը, մասնավորապես՝ Հայ Աղվանից եկեղեցու կազմավորման ու գործունեության պատմությունը: Հրապարակել է 6 մենագրություն և շուրջ 32 գիտական հոդված՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով: Զբաղվում է նաև Հայոց Արևելից նահանգների պատմամշակութային ժառանգության հետազոտությամբ:

Էլ. հասցե՝ melanyabalayan@mail.ru

Summary

THE CHURCH OF THE HOLY ALL-SAVIOR GHAZANCHETSOTS AS THE CATHEDRAL RESIDENCE OF THE ARTSAKH DIOCESE

Vahram R. Balayan
Doctor of Sciences in History

Melanya G. Balayan
Candidate of Sciences in History

Key words: Holy Savior Cathedral, Shushi, Ghazanchetsots, church, Armenian Ecclesiastical Diocese of Artsakh, Cathedral, Karabakh, Apostolic, Gospel, Bishop.

In the second half of the XVIII century, with the aim to meet the spiritual needs of the population of the Armenian quarter of Ghazanchetsots in Shushi, a wooden and then stone church was built on a stony bottom. From 1868 to1888, the

new majestic Holy Savior Ghazanchetsots Cathedral was built on the site of a dilapidated church at the expense of the Armenian population of Shushi and local benefactors.

It should be noted that before the construction of the mentioned new church, since the end of the 18th century, the Ghazanchetsots Church in Shushi had already played an important role in organizing the spiritual, cultural and social life of the Armenians of Artsakh. In 1813, after Artsakh came under the rule of the Russian Empire under the famous Gulistan Treaty, radical changes took place in all spheres of public life. The Armenian Catholicos see of Aghvank did not stay away from this either. With the intervention of the Russian court, a special circular was issued by Catholicos of All Armenians Yeprem I Dzorageghtsi in 1815, whereby the Catholicosate in Aghvank was abolished, and the dioceses that had previously been part of the Catholicosate in Aghvank were united into a metropolis subordinate to the Catholicosate of All Armenians. Having awarded the title of metropolitan to Sarkis Hasan–Jalalyants, Yeprem Dzorageghtsi appointed him the primate of the diocese, followed by Baghdasar Hasan Jalalyants on November 13, 1830. Artsakh witnesses an unprecedented rise in spiritual and cultural life.

In accordance with the charter approved by the Russian Empire on March 11, 1836, known as "Polozhenie", the Armenian Church under the rule of the Empire was divided into 6 dioceses: Novo-Nakhichevan, Astrakhan, Georgian, Shirvan, Yerevan and Karabakh. Thus, according to the mentioned charter, Shushi was recognized as the diocesan center of Karabakh, and the residence of the diocesan leader was Holy All Savior Ghazanchetsots Church.

Holy All Savior Ghazanchetsots Cathedral has played an important role in the social life of Armenians not only in Shushi but also in the Eastern provinces of Armenia, particularly, in the organization of cultural, educational, and enlightening development, in the activities of providing care to orphans, the poor, as well as in the popularization of national ideas and other similar works. To give a new impetus to all this, with the mediation and sponsorship of the diocesan leaders, Armenian benefactors from Shushi made a great contribution to the development of the above-mentioned areas. With the aim to value the role of such public figures, and even more so national ones, a kind of pantheon was founded in the courtyard of the Ghazanchetsots Church. Before the beginning of the liberation struggle in Artsakh, these tombstones were monuments of respect and incense for Armenians. From 1988 to 1991, the Azerbaijanis destroyed these monuments.

Due to its widespread patriotic activities, Holy All Savior Ghazanchetsots Church has always been the target of anti-Armenian forces. From 1905 to 1906, in 1920, the Turks tried to destroy the church. During the years of the Soviet Union, the

ՀԱՀ հասարակական գիտությունների ԳԱԿ (ԳԿ) տարի, թիվ 1 (85), հունվար-մարտ, 2024

church was turned into a warehouse and then into a barn. The dome of the church was ruined, the hewn stones were destroyed and the ornaments were scraped.

In 1992, after the liberation of Shushi, the church was renovated, once again becoming an important center for organizing the spiritual life of the Armenians of Artsakh.

In 2020, during the 44-day war, the church was bombed twice by the Turkish-Azerbaijani invaders in order to destroy the Armenian Christian Cathedral; afterwards, under the pretext of renovations, the Armenian spiritual and cultural monument was deformed. Currently, Azerbaijanis, entangled in their own falsifications, present the Armenian cathedral one day as Russian, another day as Albanian.

Резюме

ЦЕРКОВЬ СВЯТОГО ВСЕСПАСИТЕЛЯ КАЗАНЧЕЦОЦ КАК РЕЗИДЕНЦИЯ АРЦАХСКОЙ ЕПАРХИИ

Ваграм Р. Балаян
Доктор ист. наук

Меланя Г. Балаян
Кандидат ист. наук

Ключевые слова – Храм Св. Всеспасителя, Шуши, Казанчецоц, церковь, армянская духовная епархия Арцаха, кафедральный собор, Карабах, Апостольский, Евангелие, епископ.

Во второй половине XVIII в., с целью удовлетворения духовных потребностей населения армянского квартала Казанчецоц в Шуши, на каменном фундаменте сначала была построена деревянная, а затем каменная церковь.

В 1868-1888 гг. на месте полуразрушенной церкви на средства армянского населения Шуши и местных благотворителей строится новая церковь – величественный храм Св. Всеспасителя Казанчецоц.

Следует отметить, что до строительства упомянутой новой церкви, еще с конца XVIII в. церковь Казанчецоц в Шуши уже играла важную роль в организации духовно-культурной и общественной жизни армян Арцаха. В 1813 г.,

после перехода Арцаха под власть Российской империи, по Гюлистанскому общеизвестному договору произошли коренные изменения во всех сферах общественной жизни. Эти изменения коснулись также католикосатского престола Армянского Агванка. При посредничестве царского двора по решению (кондаку) католикоса Всех Армян Епрема Дзорагехци в 1815 г. был ликвидирован католикосат Армянского Агванка, взамен которого установилось митрополитство, подчиняющееся католикосу Всех Армян. Присвоив Саргису Асан-Джалалянцу звание митрополита, Епрем Дзорагехци назначил его предстоятелем епархии. В 1830 г. митрополитом Арцаха был утвержден Багдасар Асан-Джалалянц. Духовно-культурная жизнь Арцаха переживала новый подъем.

В соответствии с уставом, утвержденным Российской империей 11 марта 1836 г., известным как «Положение», армянская церковь, находящаяся под властью империи, была разделена на 6 епархий: Ново-Нахичеванскую, Астраханскую, Грузинскую, Ширванскую, Ереванскую и Карабахскую. Таким образом, согласно упомянутому уставу епархиальным центром Карабаха был признан Шуши, а резиденцией епархиального предводителя – церковь Св. Всеспасителя Казанчецоц.

Церковь Казанчецоц сыграла важную роль в общественной жизни армян не только Шуши, но и Восточных провинций Армении. В центре внимания церкви была, в частности, организация культурно-образовательных, просветительских работ, популяризация национальных идей. Также были организованы детские приюты, помощь беднейшим слоям населения и другие подобные работы. Чтобы придать всему этому новый импульс, при посредничестве епархиальных предводителей Арцаха армянские благотворители из Шуши внесли большой вклад в развитие вышеупомянутых сфер. С целью оценки роли таких общественных и национальных деятелей и в знак благодарности им во дворе церкви Казанчецоц был создан своеобразный пантеон. Эти надгробия были святыней для армян. Однако в 1988-1991 гг. азербайджанцы уничтожили эти памятники.

Из-за проводимой патриотической деятельности церковь Св. Всеспасителя Казанчецоц всегда была мишенью антиармянских сил. В 1905-1906 гг., в 1920 г. турки-татары пытались разрушить церковь.

В советские годы церковь была превращена в склад, а затем в амбар. Купол церкви был разрушен, полированные камни уничтожены, а украшения разграблены.

В 1992 г., после освобождения Шуши, церковь была отремонтирована, вновь став важным очагом организации духовной жизни армян Арцаха.

В 2020 г., в ходе 44-х дневной войны, турецко-азербайджанские оккупанты дважды бомбили церковь с целью разрушить армянский христианский

храм, затем под предлогом ремонта армянский духовный и культурный памятник был деформирован. В настоящее время азербайджанцы, запутавшиеся в собственных фальсификациях, представляют армянский храм либо как русский, либо как албанский храм.

Օգտագործված գրականություն

1. **«Արձագանք»,** Թիֆլիս, N 16, 1883:
2. **«Արձագանք»,** Թիֆլիս, N 23, 1887:
3. **«Արշալոյս»,** Թիֆլիս, N 69, 30 մարտի, 1906:
4. **Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարան**, ֆ.2, գ.5:
5. **Բաբախանյան Առ.**, Մի քանի հնութիւներ, «Արձագանք», Թիֆլիս, N 9, 1 սեպտեմբերի, 1885:
6. **«Բագուի ձայն»**, Բագու, N 119, 24 օգոստոսի, 1913:
7. **Բանբեր Հայաստանի արխիվների**, Եր., N (99), 2001, էջ 110–111:
8. **Բարխուդարյանց Մ.**, Արցախ, Աղվանից երկիր և դրացիք, Եր., 1999:
9. **«Գործ»,** Թիֆլիս, N 1, 1882:
10. **Թաղիադեանց Մ.**, ճանապարհորդութիւն ի Հայս, Կալկաթա,1847:
11. **Լէօ,** Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգեւոր դպրոցի (1838–1913), Թիֆլիս, 1914:
12. **Կիսիբեկյան Ա.**, Հուշեր, N 1, Եր., 2011:
13. **ՀԱԱ,** Խաչիկ Դադյանի ֆոնդ, ֆ. 319, ց. 1, գ. 415, թ. 35, 36, 36 ա, 37, 37 ա:
14. **ՀԱԱ**, Խաչիկ Դադյանի ֆոնդ, ֆ. 319, ց. 1, գ. 415, թ. 41:
15. **ՀԱԱ,** Սբ. Էջմիածնի Հայոց լուսավորչական սինոդ, ֆ. 56, գ. 3, փ. 293:
16. **ՀԱԱ,** Սբ. Էջմիածնի Հայոց լուսավորչական սինոդ, ֆ. 56, ց. 12, գ. 511, թ. 5:
17. **ՀԱԱ,** Սբ. Էջմիածնի Հայոց լուսավորչական սինոդ, ֆ. 56, ց, 12, գ. 538, ց. 18, գ. 542, 746, թ. 259–260, ֆ. 57Պ, ց. 3, գ. 44, թ. 7–14:
18. **Հակոբյան Հ.,** Արցախ–Ուտիքի մանրանկարչությունը 13–14–րդ դարում, Երևան, 1989:
19. **Հակոբյան Հ.,** Շուշիի մատենական ժառանգությունը, Շուշին հայոց քաղաքակրթության օրրան, գիտաժողովի նյութեր, Եր., 2007:
20. **Հարությունյան Հ.**, Շուշի. Քարաշեն անխոս վկաներ, Ստ., 2013:
21. **«Ղարաբաղ»,** Շուշի, N 8, 15 դեկտեմբերի, 1911:
22. **Մաղալեան Ա.**, Յակոբ Զաքարեանի «Պատմութիւն գաւառին Արցախու» աշխատությունը, «Հանդէս ամսօրեայ», 2006, N 1–12, էջ 317–394:
23. **Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց**, հատ. Ա., Եր., 1984:
24. **«Մասիս»,** N 3868, Կ. Պոլիս, 1887:
25. **Մատենադարան,** ձեռ. N 3869, 2622:
26. **«Մեղու Հայաստանի»**, N 67, 3 սեպտեմբերի, Թիֆլիս, 1880:
27. **«Մեղու Հայաստանի»,** Թիֆլիս, N 53, 11 յուլիսի, 1885:
28. **Մինասյան Թ.,** Արցախի գրչության կենտրոնները, Եր., 2015:

29. **Մկրտչյան Շ.,** Արցախյան գրառումներ, Եր., 2001:
30. **«Մշակ»,** Թիֆլիս, N 33, 1887, էջ 3;
31. **«Նոր Դար»,** Թիֆլիս, N 170, 1889, էջ 2:
32. **Չամչեանց Մ**., Հայոց պատմութիւն, հատ. Գ, Եր., 1984:
33. **Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան**, գիրք Թ,Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմը (1813-1933), Եր., 2001:
34. **Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան**, գիրք ԺԹ, Հայ առքելական եկեղեցու Արցախի թեմը (1649-1917), փաստթղթերի և նյութերի ժողովածու, Եր., 2014:
35. **«Փայլակ»,** Շուշի, N 39, 23 հուլիսի, 1915:
36. **«Փայլակ»,** Շուշի, N 64, 21 օգոստոսի, 1916:
37. **Քոչարյան Ա.**, Շուշիի հայոց թեմական հոգևոր դպրոցի հիմնադրման 75-ամյակի տոնակատարություններն ըստ արխիվային վավերագրերի, «Կաճառ», Շուշի, N 6, 2012, 2014, էջ 68-78:
38. **Тер–Саркисянц А.,** Армяне Нагорного Карабаха, история, культура, традиции, М., 2015.
https://www.aravot.am/2021/09/27/1218518/ (In Armenian).

REFERENCES

1. «Ardzagank», N 16, T'iflis, 1883. (**In Armenian**).
2. «Ardzagank», N 23, T'iflis, 1887. (**In Armenian**).
3. **«Arshaluys»,** N 69, T'iflis, 1906. (**In Armenian**).
4. « N 119, 24 ogostosi, Bagu, 1913. (**In Armenian**).
5. «Banber Hayastani arkhivneri», hm. 1 (99), Yer., 2001. (**In Armenian**).
6. «Gorts»**,** hm. 1, Tiflis, 1882 **(In Armenian**).
7. **«**Gharabakh**»,** N 8, Shushi, 1911 (**In Armenian**).
8. «Masis», N 3868, Kostandnupolis, 1887. (**In Armenian**).
9. «Meghu Hayastani», N 67, 3 septemberi, T'iflis, 1880. (**In Armenian**).
10. «Meghu Hayastani», hm. 53, 3 yulisi, T'iflis, 1885. (**In Armenian**).
11. «Mshak», N 33, T'iflis, 1887. (**In Armenian**).
12. «Nor Dar», N 170, T'iflis, 1889. (**In Armenian**).
13. «Paylak», N 39 , 23 hulisi, Shushi, 1915. (**In Armenian**).
14. «Paylak», N 64, 21 ogostosi, Shushi, 1916. (**In Armenian**).
15. ANA, Khachik Dadyani f. 319, c. 1, b. 415, p. 35, 36, 36a, 37, 37a. (**In Armenian**).
16. ANA, Khachik Dadyani f. 319, c. 1, b. 415, p. 41. (**In Armenian**).
17. ANA, Sb. Ējmiatcni Hayots' lusaviorchakan sinodi f. 56, c, 12, b. 538, c. 18, b. 542, 746, p. 259–260, f. 57, c. 3, b. 44, p. 7–14. (**In Armenian**).
18. ANA, Sb. Ējmiatcni Hayots' lusaviorchakan sinodi f. 56, c. 12, b. 511, p. 5. (**In Armenian**).
19. ANA, Sb. Ējmiatcni Hayots' lusaviorchakan sinodi f. 56, c. 3, p. 293. (**In Armenian**).
20. Artsakhi petakan patmaerkragitakan tangaran, f.2, g.5, t. 107. (**In Armenian**).
21. **Babakhanyan Ar**., Mi qani hnutiw'nner, «Ardzagank», N 9, 1 septemberi, Tiflis, 1885. (**In Armenian**).

22. Barkhudaryants' M., Artsakh, Aghvanits' erkir yev drak'siq, Yerevan, «Gandzasar» hrat., 1999. (**In Armenian**).
23. **Chamcheants M**., Hayots' patmut'yun, h. G, Yer., Yer. petakan hamalsarani hrat., 1984. (**In Armenian**).
24. **Hakobyan H**., Artsakh–Utiqi manrankarchutyunē 13–14–rd darerum, Yerevan, «Sowetakan grogh» hrat., 1989. (**In Armenian**).
25. **Hakobyan H**., Shushii matenakan zharangutyuny, Shushin Hajoc qaghaqakrtutyan orran, gitazhoghovi nyut'er, Yer., «Gitutyun» hrat., 2007. (**In Armenian**).
26. **Harutyunyan H**., Shushi. Qarashen ankhos vkaner, Stepanakert, «Sona» hrat., 2013. (**In Armenian**).
27. https://www.aravot.am/2021/09/27/1218518/ (**In Armenian**).
28. **Kisibekyan A.,** Husher, h. 1, Yer., «Araspel indeks» hrat., 2011 (**In Armenian**)..
29. **Leo,** Patmut'yun Kharabaghi Hayoc temakan hogevor dprots'i (1838-1913), T'iflis, Hratarakut'yun noyn dproci hogabardzutyan, 1914. (**In Armenian).**
30. **Maghalean A**., Yakob Zaqareani «Patmutyun gavarin Artsakhu» ashkhatut'yunē, «Handes amsoreay», 2006, N 1–12. (**In Armenian**).
31. Matenadaran, dzer. hm. 3869, 2622. (**In Armenian**).
32. Mayr ts'uts'ak hayeren dze'ragrats Mashtots anvan Matenadarani, hat. A., Yer., HSSH GA hrat., 1984. (**In Armenian**).
33. **Minasyan T.,** Artsakhi grchutyan kentronnerě, Yer., «Nairi» hrat., 2015. (**In Armenian**).
34. **Mkrtchyan Sh**., Artsakhian grarumner, Yer., «Noyan tapan» hrat., 2001. (In Armenian).
35. **Kocharyan A**., Shushii Hayoc 2emakan hogevor dproci himnadrman 75–amyaki tonakatarut'yunnern ěst arkhiwain vaveragreri, «Kajar», N 6, 2012, Shushi, 2014. (**In Armenian**).
36. **Taghieadyants** M., Jhanaparhordutiwn i Hays, Kalkata, 1847. (**In Armenian**).
37. **Ter–Sarkisyants A**., Armyane Nagornogo Karabakha, istoria, kultura, tradicii, M., NP IZD. «Russkaya panorama», 2015. (**In Russian**).
38. Vaweragrer Hay ekeghets'u patmyut'ean, girq T, Haj aragelakan ekeghecu Artaskhi temy (1813-1933), pastatghteri yev nyuteri zhoghovats'u, Yer., Hayastani Hanrapetut'yan karavarut'yann ar'nter arkhivayn gorts'i varchut'yun, 2001. (**In Armenian**).
39. Vaveragrer Hay ekeghecu patmwut'ean, girq ZHT, Hay arak'elakan ekeghecu Artsakhi' temě (1649-1917), p'astatgh'teri yev nyut'eri zhoghovats'u, Yer., HH Azgayin arkhivi hrat., 2014. (**In Armenian**).